



**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱԿՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ԴԱՍԸՆԹԱՑ 2023**

**Ավարտական հետազոտական աշխատանք**

Հետազոտության թեման՝ Ընտանիքի հոգեբանություն,  
կոնֆլիկտներ

Առարկա՝ Պատմություն

Հետազոտող ուսուցիչ՝ Արուսյակ Առաքելյան

Ուսումնական հաստատություն՝ «Փարաքարի միջն. դպրոց

## Բովանդակություն

Ներածություն՝ հետազոտության նպատակը, խնդիրներ:

1. Ընտանիքի հոգեբանություն և կոնֆլիկտներ

ա) Ընտանիքի հոգեբանության նկարագիրը

բ) Ընտանեկան կոնֆլիկտների նկարագիրը

2. Ընտանեկան կոնֆլիկտների տեսակները և դրանց ազդեցությունը երեխայի անձի ձևավորման վրա

ա) Միջանձային հարաբերությունները ընտանիքում

բ) Ինչ ազդեցություն են ունենում կոնֆլիկտները երեխայի հոգեբանության և ուսման վրա:

3. Եզրակացություն

4. Գրականության ցանկ

## Ներածություն

*«Ընտանիքը փոքրիկ հասարակություն է, որի ամբողջականությամբ է պայմանավորվում մարդկային հասարակության անվտանգությունը»:*

## Աղեր

Ի՞նչ է «ընտանիքի հոգեբանությունը».

Ընտանիքի հոգեբանությունը ուսումնասիրում է ամուսնարնտանեկան հարաբերությունները, նրանց առաջացման յուրահատկությունները(ձևավորում կայունացումը և քայքայում):

Իմ աշխատանքի նպատակն է, ցույց տալ ընտանիքի դերը երեխայի հոգեբանության ձևավորման և կոնֆլիկտներից զերծ պահելու գործում:

Հետազոտության խնդիրն է՝ ինչպես ձևավորել առողջ ընտանիք:

Ընտանիքի հոգեբանությունը՝ որպես հոգեբանության մի առանձին ճյուղ ուսումնասիրվել է բազմաթիվ հոգեբանների կողմից: Ընտանիքը կարելի է բնութագրել որպես պատմականորեն կոնկրետ հարաբերությունների համակարգ ամուսինների միջև, որպես փոքր սոցիալական խումբ, որի անդամները կապված են. ամուսնական կամ ազգակցական հարաբերություններով, կենցաղի ընդհանրությամբ և փոխադարձ բարոյական պատասխանատվությամբ:

Դեռևս իր ժամանակին մեծ մտածող Արիստոտելը անդրադարձել է «ընտանիք» թեմային և նշել. *«ընտանիքը հասարակության բջիջն է»:*

Հետևաբար հասարակությունը ինչպես նաև պետությունը կարող են լինել առողջ, եթե առողջ և կայուն է ընտանիքը: Հոգեբանության տեսանկյունից առողջ է այն ընտանիքը, որում հուզական փոխհարաբերությունները ձևավորված են ու կայուն թե՛ ամուսինների, թե՛ ծնողների ու երեխաների միջև: Այսինքն առողջ ընտանիքում տիրում է դրական բարոյահոգեբանական մթնոլորտ:

Մարդու անձի զարգացման ու ձևավորման գործընթացում էական դերը պատկանում է դաստիարակությանը: Կազմակերպված, նպատակասլաց ու նպատակաուղղված դաստիարակությունը հասարակական գործունեություն է: Հոգեբանները և մանկավարժները գտնում են, որ դպրոցական տարիքում զարգացման բնականոն շեղումների աղանդները գտնվում են ընտանիքում, ուստի ընտանիքը հանդիսանում է երեխայի դաստիարակության և կայացման գործընթացում կարևորագույն սոցիալական ինստիտուտը: Սրանից հասկանում ենք, որ անձի, անհատի կայացումը, սոցիալականացումը սկսվում է ընտանիքում:

Թեմայի արդիականացումը պայմանավորված է՝ ծնողների սիրո և հոգածության պակասով, ընտանեկան արժեքների փոփոխությամբ, որոնք այսօր շատ երեխաների համար ստեղծել են շփման լուրջ խոչընդոտներ և խաթարել բնականոն զարգացումը: Մեծացել է ոչ լիարժեք ընտանիքների թիվը, որի հիմնական պատճառը բաժանություններն են: Յուրաքանչյուր երեխայի նորմալ զարգացման համար անհրաժեշտ է սիրող և համախմբված ընտանիք, առողջ հասարակություն, որը կլինի համագործակցային, փոխներգործուն:

Գաղտնիք չէ, որ ժամանակակից տեխնոլոգիաները իրենց դրական և բացասական ազդեցությամբ մեծ ներգործություն ունեն ընտանիքի անդամների հոգեբանության և նրանց փոխհարաբերությունների վրա:

Մարդկային սովորական շփումը փոխարինվել է վիրտուալ հաղորդակցությամբ՝ ազդելով մարդկանց ինքնաարտահայտման և ինքնադրսևորման վրա: Հաճախ ապրելով միևնույն հարկի տակ՝ ընտանիքի անդամները օտարանում են տարբեր պատճառներով:

Թվում է թե ժամանակակից աշխարհում, երբ զարգացման բարձր մակարդակի են հասել տեխնոլոգիաները և մարդկային միտքը՝ նվազագույնի հասցնելով կենցաղային ծանրաբեռնվածությունը, խնդիրները ևս պետք է նվազեին, սակայն իրականում հակառակն է կատարվում:

Անհատականության ձևավորման վրա ընտանիքի ազդեցության խնդիրը եղել և մնում է մանկավարժության կարևորագույն խնդիրներից մեկը:

Կարևորում եմ բացահայտել, թե ինչպես և որքանով են ընտանիքում կոնֆլիկտներն ազդում երեխաների անձի զարգացման և ուսումնական գործընթացի վրա:

- Ընտանիքի հոգեբանություն և կոնֆլիկտներ

ա) ընտանիքի հոգեբանության նկարագիրը

***Տունը չի կարող ընտանեկան օջախ համարվել, քանի դեռ նրանում սնունդ ու կրակ չկա ինչպես մարմնի, այնպես էլ հոգու համար:***

**Մարգարետ Ֆուլեր**

Մարդկային քաղաքակրթությունն իր զագացման ընթացքում ստեղծել է մի շարք անփոխարինելի արժեքներ, որոնցից մեկն էլ ընտանիքն է:

Ընտանիքը՝ ամուսնության կամ ազգակցության վրա հիմնված, մարդկանց փոքր խումբ է: Այստեղ անդամները միմյանց հետ կապված են կենցաղային ընդհանրությամբ, փոխադարձ օգնությամբ և բարոյական պատասխանատվությամբ: Ամուսնությունը և ընտանիք կազմելը յուրաքանչյուր մարդու համար կենսական կարևորագույն անհրաժեշտություն է: Ընտանիքը սերնդի վերարտադրության հիմնական բջիջն է: Մարդկանց ամուսնության համար դրդապատճառ կարող է դառնալ՝ սիրելու և սիրված լինելու, երեխաներ ունենալու, նրանց դաստիարակելու, ապահով կյանքով ապրելու ցանկությունները:

Ընտանիքը փոխվում է հասարակության տնտեսական հիմքի զարգացմանը համապատասխան՝ պահպանելով հարաբերական ինքնուրույնություն:

Ընտանիքում հարաբերությունները սերտ են և անմիջական: Ընտանիքի անդամները մշտապես կապի մեջ են, տեսնում են իրար, մտքեր ու կարծիքներ են փոխանակում, հաշվի են առնում միմյանց կարծիքները: Ռոսս գրող Անտոն Զեխովը նշել է, որ ընտանեկան կյանքի ամենակարևոր շարժիչը սերն է:

Շատ կարևոր են ներընտանեկան հարաբերությունները և ընտանիքում ծնվող երեխաների համար ստեղծվող միջավայրը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 32-րդ հոդվածի համաձայն՝ ընտանիքը հասարակության բնական և հիմնական բջիջն է:

Ընտանիքը, մայրությունը և մանկությունը գտնվում են հասարակության և պետության հովանավորության ու պաշտպանության ներքո:

Մերը հայրենիքի հանդեպ սկսվում է ընտանիքից: Հասարակության հետ շփման առաջին հատությունները ևս ձեռք են բերում հենց ընտանիքում:

Ընտանիքը հասարակության փոքր միավոր է, որը մեծ նշանակություն ունի յուրաքանչյուր մարդու սոցիալական զարգացման գործում: Ընտանիքն է առաջին հասարակությունը, որին հանդիպում ենք մեր կյանքում. դա շատ կարևոր է, քանի որ փոքրիկ մարդը մայրիկի և հայրիկի հետ շփվելու միջոցով ձեռք է բերում հատություններ, թե ինչպես հետագայում շփվել ամբողջ հասարակության հետ: Ընտանիքի դերը մարդու կյանքում նույնպես շատ կարևոր է, քանի որ մենք առաջին տարիներն անցկացնում ենք դրանում, երբ դրվում են կյանքի բոլոր արժեքներն ու առաջնահերթությունները: Ստանում ենք առաջին փորձը, թե ինչպես վարվել այլ մարդկանց շրջապատում:

Այդ իսկ պատճառով երեխայի կյանքի առաջին երեք տարիները պետք է անցկացվեն ընտանիքում կամ շրջապատված լինեն մարդկանցով, ովքեր ստանձնել են այս մարդու ընտանիքի դերը:

Այս մարդիկ փոխարինում են երեխայի ընտանիքին ու ջերմություն, հոգատարություն են հաղորդում նրան: Ընտանիքի դերը նույնպես շատ կարևոր է, քանի որ այն կարող է երեխայի մեջ սերմանել ոչ միայն դրական, այլև բացասական հիմքեր: Այսօր ստղծվել է այնպիսի իրավիճակ, որ ծնողները որոշ չափով հեռու են մնացել դաստիարակությունից: Շատ ծնողներ, ովքեր ընտրել են զբաղված ապրելակերպ, շատ վաղ են սկսում իրենց երեխաներին ուղարկել դայակների, տատիկների ու

պապիկների ձեռքը, կամ մանկապարտեզ , որտեղ երեխան վերահսկվում է ուսուցչի կողմից:Այսօր շատ երեխաների կյանքում և զարգացման մեջ գլխավոր տեղ են զբաղեցնում բջջային հեռախոսները, պլանշետները և մուլտֆիլմերը: Դա հանգեցնում է նրան, որ երեխան աստիճանաբար կտրվում է մարդկանցից և հասարակությունից և դառնում միայնակ: Ինչպես ասում են հետազոտողները, ժամանակակից ընտանիքը ենթարկվել է որոշակի փոփոխությունների, հետևաբար աստիճանաբար փոխվում է հասարակությունն ամբողջությամբ:

Ընտանիքն ազդում է երեխայի անհատականության ձևավորման և համակողմանի դաստիարակության վրա: Լինելով փոքր սոցիալական խումբ նրա անդամները ազդում են մեկը մյուսի վրա: Ընտանիքի առանձին անդամները ազդում են միմյանց վրա և հատկապես կրտսեր սերնդի ներկայացուցիչների հոգևոր արժեքների ձևավորման, կրթության, ընտանեկան վերաբերմունքի վրա:

Այս խնդիրն անդրադարձել է Գ.Վ.Բրումեսկայան:Նա գտնում է , որ անհատականության ձևավորման վրա ազդում են բազմաթիվ սոցիալական գործոններ, որոնցից ամենակարևորներից է ընտանիքը:Ավանդաբար ընտանիքը կրթական հաստատություն է: Ընտանիքում ստացածը մարդը պահում է ողջ կյանքի ընթացքում: Ընտանիքի կարևորությունն ու նշանակությունը կայանում է նրանում, որ մարդն իր կյանքի մեծ մասն անցկացնում է նրա մեջ: Անհատականության հիմքերը դրվում են ընտանիքում:

Յուրաքանչյուր մարդու կյանքում ծնողները հսկայական դեր են խաղում, նրանք իրենց երեխաներին տալիս են վարքի նոր օրինաչափություններ, նրանց շնորհիվ երեխան ուսումնասիրում է շրջապատող աշխարհը, ընդօրինակում ծնողներին: Եթե ծնողները հասկանում են այս օրինաչափությունը, որ իրենց երեխայի անհատականության ձևավորումն ավելի մեծ չափով կախված է իրենցից, ապա նրանք վարվում են այնպես, որ իրենց գործողությունները ազդում են երեխայի մեջ այնպիսի հատկությունների ձևավորման վրա, որոնք կուզենային փոխանցել նրան:Այս գործընթացը գիտակցված է, քանի որ սեփական վարքի նկատմամբ մշտական վերահսկողությունը, ուրիշներ

նկատմամբ վերաբերմունքը հնարավորություն են տալիս երեխային դաստիարակվել առավել բարենպաստ պայմաններում, որոնք կնպաստեն երեխայի համակողմանի զարգացմանը:

Ընտանիքը մեծ ազդեցություն ունի երեխայի անհատականության զարգացման վրա: Եթե երեխան չի մասնակցում ընտանեկան կյանքին, ուրեմն շատ բան է կորցնում: Սա ավելիի շատ ընդգծվում է այն դեպքում, երբ երեխան փոքր է, կամ ապրում է ընտանիքից դուրս՝ այսինքն մանկատանը կամ այլ հաստատություններում: Նման երեխայի անհատական զարգացումը տեղի է ունենում այլ կերպ, քան իրենց ընտանիքներում դաստիարակվող երեխաների մոտ:

Անհատականության զարգացման մեջ հարաբերությունները պայմանավորված են նրանով, որ դրանք սոցիալական հարաբերությունների առաջին հատուկ մոդելն են, որին յուրաքանչյուր մարդ հանդիպում է կյանքի առաջին իսկ օրերից, դրանցում նա գտնում է սոցիալական հարաբերությունների ողջ հարստությունը: Ընտանիքում ձևավորվում է և երեխաների, և ծնողների անհատականությունը: Երեխաների դաստիարակությունը հարստացնում է ծնողներին, ուժեղացնում նրանց սոցիալական փորձը: Ծնողների մոտ հիմնականում դա տեղի է ունենում անգիտակցաբար, բայց վերջին ժամանակներում կան այնպիսի ծնողներ, որոնք գիտակցաբար իրենք իրենց դաստիարակում են:

Ընտանիքի ներուժի բացահայտման ու բարձրացման գործում կարևոր դեր են խաղում մի շարք բաղադրիչներ

- ծնողների կրթական մակարդակը
- մանկավարժական գործունեությունը
- ուրիշների հետ լավ հարաբերությունն հաստատելու ունակությունը
- ընտանիքի կառուցվածքային տեսակը և այլն:



Ըստ Հ.Մ.Մարկովսկայայի ընտանիքում փոխհարաբերություններն ունեն այնպիսի բնութագիր, որոնք ընտանիքում կրթությունը դարձնում են կրթության ամենահամարժեք ձևը, որը լիարժեք համապատասխանում է անձի զարգացման տվյալ ժամանակահատվածի բնութագրերին:

բ) ընտանեկան կոնֆլիկտների նկարագիրը

Ի՞նչ ենք հասկանում «կոնֆլիկտներ» ասելով:

Գոյություն ունի «կոնֆլիկտ» հասկացության մի քանի սահմանում: Բ. Մ. Ռեբուսը կոնֆլիկտը բնութագրում է որպես մարդկանց գիտակցության մեջ միմյանց հանդեպ հակադարձ ուղղված և անհամատեղելի միտումների բախում՝ կապված բացասական սուր հուզական ապրումների հետ: Ըստ Ա. Վ. Սերգեյչուկի՝ կոնֆլիկտն անհատների անհամատեղելի նպատակների, հետաքրքրությունների, դիրքորոշումների, կարծիքների, հայացքների բախում է: Կոնֆլիկտը երկու և ավելի մարդկանց (խմբերի) միջև սուր և դժվար լուծվող հակասություն է, որը բնութագրվում է հակամարտությամբ, հակասող կողմերի կողմից ուժեղ միջոցների փոխադարձ կիրառմամբ՝ հակառակ կողմին հաղթելու նպատակով:

Շատ կարևոր է ուսումնասիրել ընտանեկան հարաբերություններում տեղի ունեցող տեղաշարժերը, ընտանեկան կոնֆլիկտների առաջացման պատճառները և դրանց ազդեցությունը երեխայի անձի ներդաշնակ ձևավորման վրա: Ըստ վիճակագրական տվյալների ընտանեկան կոնֆլիկտների հիմնական պատճառը հաղորդակցման կուլտուրայի, փոխադարձ վստահության, քաղաքավարության, ուշադրության, բարյացակամության, նրբազգացության բացակայությունն է:

Իրականում կոնֆլիկտների պատճառ կարող են հանդիսանալ հոգեբանական անհամատեղելիությունը, սեռական խնդիրները, միմյանց մտադրությունները չհասկանալը, վարքի սխալ մեկնաբանությունները, բարոյականության վերաբերյալ տարբեր մոտեցումները, պարտքի և պատասխանատվության զգացումի

բացակայությունը և այլն: Ընդլայնված ընտանիքներում կոնֆլիկտներն ավելի հաճախ են ծագում, քան բջջային ընտանիքներում: Ընդլայնված է այն ընտանիքը, որտեղ բացի ամուսիններից և նրանց երեխաներից կան նաև այլ ազգականներ:

Գոյություն ունեն նաև այնպիսի ընտանիքներ, որտեղ բավականին բարձր է կոնֆլիկտայնության աստիճանը, խաթարված է ընտանիքի անդորրը, միջանձնային հարաբերություններում առկա է լարվածություն: Դրանք են, օրինակ՝

- ներոտիկ ընտանիքները, որտեղ գույզի մոտ նկատվում են տազնապայնության բարձր մակարդակ, քնի խանգարում, ագրեսիվություն,

- ճգնաժամային ընտանիքներ, որտեղ ամուսինները թշնամաբար են տրամադրված միմյանց նկատմամբ, հաշվի չեն առնում միմյանց հետաքրքրությունները, հակված չեն փոխզիջման,

- պրոբլեմային ընտանիքներ, որտեղ առկա խնդիրների, կյանքի ծանր պայմանների արդյունքում ընտանիքը հայտնվում է անկայուն վիճակում:

Մշտական վեճերը, կոնֆլիկտները միանշանակ ազդում են ինչպես ամուսնական գույզի, այնպես էլ երեխայի հոգեկան առողջության վրա: Ծնողների միջև ծագած կոնֆլիկտի արդյունքում երեխան կարող է ունենալ մեղքի զգացում՝ կարծելով, որ ինքն է հանդիսացել կոնֆլիկտի պատճառ: Որոշ դեպքերում էլ երեխայի մեջ կարող է առաջանալ վախի զգացում: Սա նկատվում է հատկապես այն ժամանակ, երբ երեխան ականատես է լինում ծնողների վեճին կամ բռնության տեսարանների:

Այսպիսի երեխաներն ապրում են մեղքի, վախի զգացումով, լինում մեկուսացված ու անհանգիստ, նաև կարող են ունենալ նյարդային, հոգեսոմատիկ և այլ հիվանդություններ: Հարկ է նշել, որ որոշ երեխաների համար էլ կոնֆլիկտը դառնում է սովորական մի երևույթ: Հետագայում՝ հասուն տարիքում, նրանք այդ նույն անտարբերությունը դրսևորում են շրջապատող մարդկանց, երևույթների նկատմամբ, դառնում են սառնասիրտ, ունենում ապրումակցման ցածր մակարդակ:

Այս երեխաների ծնողները, տարված լինելով հարաբերություններ պարզելով, չեն նկատում, որ իրենց երեխան ձեռք է բերում բնավորության բացասական գծեր, կատարում անընդունելի արարքներ, դրսևորում հակասոցիալական վարքագիծ:

Ընտանիքում ծնողը կարող է կոնֆլիկտներ ունենալ տարբեր տարիքի երեխաների հետ: Պատճառը ծնողի՝ երեխայի տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները չգիտակցելն է, դաստիարակության ձևերին չտիրապետելը, երեխայի մտադրությունները չհասկանալը, նրան մշտապես փոքր և անկարող մարդ համարելը: Մի տարիքային փուլից մյուսին անցումն ուղեկցվում է ճգնաժամով, որը միշտ չէ, որ սահուն է ընթանում: Ճգնաժամը կարող է լարվածություն առաջացնել հարաբերություններում՝ հատկապես երեք տարեկանում և դեռահասության տարիքում: Մեծ թվով կոնֆլիկտներ են առաջանում դեռահասության տարիքում, ինչը պայմանավորված է դեռահասների հոգեբանական, ֆիզիկական և սեռական կյանքում տեղի ունեցող փոփոխություններով: Դեռահասությունն ինքնին համարվում է ճգնաժամային տարիք, և այս տարիքային փուլում առավել կարևոր են ընտանեկան ջերմ հարաբերությունները, փոխադարձ վստահությունը, հարգանքը, փոխըմբռնումը: Ծնող-երեխա հարաբերություններում կոնֆլիկտներ են առաջանում նաև սխալ դաստիարակության պատճառով: Ծնողը միշտ ձգտում է իր երեխային դարձնել օրինակելի, անթերի՝ կիրառելով խիստ պատժամիջոցներ, կոպիտ վարվելով, քիչ խրախուսելով, երբեմն էլ դաժան վերաբերմունք դրսևորելով: Ոչ տեղին պատիժը, ծնողի կոպտությունը, դաժանությունը երեխայի մեջ հանգեցնում են երկու ծայրահեղ դրսևորումների. առաջին դեպքում երեխան մեծանում է չարացած, ագրեսիվ, երկրորդ դեպքում՝ անվստահ, բարդույթավորված: Երեխա-երեխաների հարաբերություններում կոնֆլիկտի պատճառները մի քանիսն են: Առաջին պատճառը երեխայի հանդեպ ուշադրության պակասն է: Երեխա-երեխա հարաբերություններում կոնֆլիկտի առաջացման երկրորդ պատճառը ծնողի կողմից երեխաների միջև սեռային խտրականություն դնելն է:

Կոնֆլիկտների պատճառ կարող են հանդիսանալ կենցաղային պայմանները, ֆինանսական խնդիրները, կրթվածության մակարդակի տարբերությունները, մայրական խանդը, հարսի ինքնահաստատվելու ձգտումը, երեխայի դաստիարակության հետ կապված տարբեր մոտեցումները, բնավորության նխառնվածքի անհամատեղելիությունը և այլն: Կոնֆլիկտներ են առաջանում նաև ընտանիքի այլ անդամների միջև, երբ առաջ է գալիս նյութական բարեկեցության, ժառանգության հարցը:

Առաջին հայացքից թվում է, թե այս տեսակի կոնֆլիկտներն ազդեցություն չունեն երեխայի հոգեկան զարգացման վրա, սակայն, երբ երեխան ականատես է լինում, թե ինչպես են ծնողները վիճաբանում, վիրավորում, վարկաբեկում մեկը մյուսին, փոխվում է նաև նրա հոգեվիճակը: Կոնֆլիկտային իրադրությունը երեխային դարձնում է սառնասիրտ, չշփվող, դաժան, անուշադիր, ագրեսիվ, կոպիտ կամ էլ անվստահ, ինքնամփոփ, ընկճված ու անտարբեր:

Ընդհանրացնելով՝ եկանք այն եզրակացության, որ ընտանիքի անառողջ մթնոլորտը, ամուսինների կոնֆլիկտային հարաբերությունները միանշանակ բացասական ազդեցություն են գործում երեխայի վրա: Երեխան, որը մշտապես գտնվում է լարված, սթրեսային վիճակում, ունենում է ծանր բնավորություն, չի կարողանում կապեր հաստատել հասակակիցների և մեծահասակների հետ, ունենում է ոչ ադեկվատ, ցածր ինքնագնահատական:

## 2. Ընտանեկան կոնֆլիկտների տեսակները

Ընտանիքի յուրահատկություններից մեկն այն է, որ մի քանի մարդ ամենասերտ փոխհարաբերությունների մեջ են լինում երկարատեւ ժամանակահատվածում, մի քանի տասնյակ տարիների ընթացքում: Նման ինտենսիվ փոխազդեցության համակարգում դժվար է գոյակցել առանց վեճերի, կոնֆլիկտների, եւ ճգնաժամերի: Ընտանիք կազմելուց հետո սկսվում է ամուսնական առօրյան իր հոգսերով, ամուսինների միջեւ կարող են առաջանալ նաեւ հակասություններ,

կոնֆլիկտներ, որոնք առաջ են բերում ներընտանեկան անբարենպաստ փոխհարաբերություններ:

Այդ կոնֆլիկտները կարող են վերաբերվել ամուսնական կյանքի տարբեր կողմերին, դրամին, հետաքրքրություններին, բարեկամներին, ազգականներին, երեխաներին և այլն: Ներընտանեկան անբարենպաստ փոխհարաբերությունների առաջացման հիմնական եւ ավելի հաճախ հանդիպող պատճառներից մեկը կոնֆլիկտներն են ընտանիքի անդամների միջեւ: Ընտանիքի անդամների միջեւ միշտ առկա է պայքար հանուն իշխանության, հանուն որոշումներ կայացնելու իրավունքի:

Ի՞նչ է կոնֆլիկտը: Այդո՞ք ք այն կարող է դրական ազդեցություն ունենալ: Ի՞նչն է ընկած դրա հիմքում և ինչպե՞ս վարվել կոնֆլիկտային իրավիճակներում. ահա այն հարցերը, որոնց կանդրադառնանք սույն վերլուծության շրջանակում: Առհասարակ, կոնֆլիկտներն այնքան համընդհանուր և բազմատեսակ են իրենց բնույթով, որ առաջին հայացքից անհնար է թվում մեկ ամբողջական սահմանում տալը: Ինչպես կասեր Օսկար Ուայլդը. «Սահմանել՝ նշանակում է սահմանափակել»: Այնուամենայնիվ, կոնֆլիկտը ինչ-որ առարկայի շուրջ առկա տարաձայնությունն է: Կոնֆլիկտները լինում են՝

1. Ներանձնային
2. Միջանձնային
3. Անձի և խմբի միջև
4. Միջխմբային
5. Միջազգային

Ընտանեկան կյանքը մշտապես հարթ ու սահուն չի: Ամուսինների միջև հնարավոր են նաև վեճեր և կոնֆլիկտներ, որոնք կարող են ընդգրկել ընտանեկան կյանքի ամենատարբեր ոլորտներ՝ հաղորդակցություն, նյութական բարեկեցություն, երեխաների դաստիարակություն, ազատ ժամանակաի կազմակերպում, հետաքրքրություններ, վատ սովորություններ: Բազմաթիվ ընտանիքներ իրենց

գոյության ժամանակահատվածներում մեկ կամ մի քանի անգամ կարող են հայտնվել ճգնաժամային վիճակում: Պատահական չէ, որ ժամանակակից ընտանիքի հոգեբանության բնագավառում ճգնաժամերի ուսումնասիրությանը մեծ նշանակություն է տրվում: Ամուսինների միջև ճգնաժամ կարող է ծագել վերոհիշյալ հիմնական պահանջմունքներից և սպասումներից յուրաքանչյուրի չբավարարված մնալու դեպքում կոնֆլիկտներն ու ճգնաժամերն է՛լ ավելի սուր ու տանջալից են լինում, երբ դրանք ծագում են մեկից ավելի պահանջմունքների չբավարարված մնալու հետևանքով: Սկզբունքորեն, որքան ցածր է կոնֆլիկտի բարդության աստիճանը, այնքան ավելի հեշտ է մեղմել կամ լուծել այն: Բարդ կոնֆլիկտները, որոնք ընդգրկում են չբավարարված երկու կամ ավելի պահանջմունքներ և դերային սպասումներ, շատ դժվար է լուծել:

Առանձնացվում է ընտանեկան կոնֆլիկտների հետևյալ տեսակներն ու հիմնական պատճառները.

1. Կոնֆլիկտ ամուսնական գույգի միջև: Կին-տղամարդ հարաբերություններում կոնֆլիկտի պատճառ կարող են լինել հոգեբանական անհամատեղելիությունը, գույգերից մեկի ծանր բնավորությունը, սեռական անբավարարվածությունը, դավաճանությունը, աշխարհընկալման և արժեհամակարգի անհամապատասխանությունը, կնոջ անկարողությունը՝ լուծելու կենցաղային հարցերը, ֆինանսական խնդիրները և այլն: Կոնֆլիկտը կարող է պայմանավորված լինել նաև ընտանեկան հարաբերությունների ճգնաժամով: Առաջին ճգնաժամն ի հայտ է գալիս ամուսնության 1-ին տարում, հատկապես երբ ընտանիքում երեխա է ծնվում, երկրորդը՝ ամուսնության 3-7-րդ տարում, երրորդը՝ 17-25-րդ տարում: Ամուսնական կոնֆլիկտները հաճախ առաջանում են գույգերի ֆիզիկական և հոգեբանական անհամատեղելիության պատճառով: Ծնողների միջև ծագած կոնֆլիկտի արդյունքում երեխան կարող է ունենալ մեղքի զգացում՝ կարծելով, որ ինքն է հանդիսացել կոնֆլիկտի պատճառ: Որոշ դեպքերում էլ երեխայի մեջ կարող է առաջանալ վախի զգացում: Սա նկատվում է հատկապես այն ժամանակ, երբ երեխան ականատես է

լինում ծնողների վեճին կամ բռնության տեսարանների: Այսպիսի երեխաներն ապրում են մեղքի, վախի զգացումով, լինում մեկուսացված ու անհանգիստ, նաև կարող են ունենալ նյարդային, հոգեւոմատիկ և այլ հիվանդություններ: Հարկ է նշել, որ որոշ երեխաների համար էլ կոնֆլիկտը դառնում է սովորական մի երևույթ: Հետագայում՝ հասուն տարիքում, նրանք այդ նույն անտարբերությունը դրսևորում են շրջապատող մարդկանց, երևույթների նկատմամբ, դառնում են սառնասիրտ, ունենում ապրումակցման ցածր մակարդակ: Այս երեխաների ծնողները, տարված լինելով հարաբերություններ պարզելով, չեն նկատում, որ իրենց երեխան ձեռք է բերում բնավորության բացասական գծեր, կատարում անընդունելի արարքներ, դրսևորում հակասոցիալական վարքագիծ:

2. Կոնֆլիկտ ծնող-երեխա հարաբերություններում: Ընտանիքում ծնողը կարող է կոնֆլիկտներ ունենալ տարբեր տարիքի երեխաների հետ: Պատճառը ծնողի՝ երեխայի տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները չզիտակցելն է, դաստիարակության ձևերին չտիրապետելը, երեխայի մտադրությունները չհասկանալը, նրան մշտապես փոքր և անկարող մարդ համարելը: Մի տարիքային փուլից մյուսին անցումն ուղեկցվում է ճգնաժամով, որը միշտ չէ, որ սահուն է ընթանում: Ճգնաժամը կարող է լարվածություն առաջացնել հարաբերություններում՝ հատկապես երեք տարեկանում և դեռահասության տարիքում: Ծնող-երեխա հարաբերություններում կոնֆլիկտներ են առաջանում նաև սխալ դաստիարակության պատճառով: Ծնողը միշտ ձգտում է իր երեխային դարձնել օրինակելի, անթերի՝ կիրառելով խիստ պատժամիջոցներ, կոպիտ վարվելով, քիչ խրախուսելով, երբեմն էլ դաժան վերաբերմունք դրսևորելով: Ոչ տեղին պատիժը, ծնողի կոպտությունը, դաժանությունը երեխայի մեջ հանգեցնում են երկու ծայրահեղ դրսևորումների. առաջին դեպքում երեխան մեծանում է չարացած, ագրեսիվ, երկրորդ դեպքում՝ անվստահ, բարդույթավորված:

3. Կոնֆլիկտ երեխա-երեխա հարաբերություններում: Երեխա-երեխաների հարաբերություններում կոնֆլիկտի պատճառները մի քանիսն են: Առաջին պատճառը

երեխայի հանդեպ ուշադրության պակասն է: Որպես կանոն՝ ընտանիքում երկրորդ երեխայի ծնունդն առաջնեկի մեջ առաջացնում է մերժված, անտեսված լինելու զգացողություն, ինչն էլ կարող է վերածվել ատելության ինչպես ծնողի, այն- պես էլ քրոջ կամ եղբոր նկատմամբ: Երկրորդ երեխայի ծնվելուց հետո ծնողներն 13 առավել ուշադիր պետք է լինեն առաջնեկի նկատմամբ, նրա մեջ ձևավորեն դրական վերաբերմունք նորածնի նկատմամբ: Միայն ծնողից է կախված երեխա-երեխա հարաբերությունների բնույթը: Երեխա-երեխա հարաբերություններում կոնֆլիկտի առաջացման երկրորդ պատճառը ծնողի կողմից երեխաների միջև սեռային խտրություն դնելն է: Հայկական ընտանիքներում նորմալ է տղա-աղջիկ երեխաներին բաժանել ծնողների միջև: Մայրերը սովորաբար սիրում են տղա երեխաներին՝ տալով նրանց արտոնություններ, իսկ հայրերը նմանատիպ վերաբերմունք են դրսևորում աղջիկների հանդեպ: Երեխան դեռևս վաղ տարիքից հասկանում և զգում է ծնողի վերաբերմունքն ու սկսում է հակակրանք զգալ եղբոր կամ քրոջ նկատմամբ: Ընդհանրացնելով կատարած աշխատանքը՝ եկանք այն եզրակացության, որ ընտանիքի անառողջ մթնոլորտը, ամուսինների կոնֆլիկտային հարաբերությունները միանշանակ բացասական ազդեցություն են գործում երեխայի վրա: Երեխան, որը մշտապես գտնվում է լարված, սթրեսային վիճակում, ունենում է <> բնավորություն, չի կարողանում կապեր հաստատել հասակակիցների և մեծահասակների հետ, ունենում է ոչ ադեկվատ, ցածր ինքնագնահատական: Ցանկացած ընտանիքում վեճերն ու կոնֆլիկտներն անխուսափելի են, ուստի յուրաքանչյուր մեծահասակ ամուսնական զույգ պետք է սթափ գիտակցի, որ պատասխանատվություն է կրում ձևավորելու և դաստիարակելու առողջ երեխա: Այդ պատճառով ընտանիքում պետք է.

1. կոնֆլիկտների թիվը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում դրանց արագ լուծում տալ,
2. ընտանիքում ստեղծել խաղաղ, հանգիստ մթնոլորտ երեխայի ֆիզիկական և հոգեկան զարգացման համար,



3. բարիդրացիական հարաբերություններ հաստատել ինչպես երեխայի, այնպես էլ ընտանիքի բոլոր անդամների հետ՝ հիմնված սիրո և հարգանքի վրա:

Ընտանիքում հարաբերությունների ցանկացած շեղում նշանակում է «վնաս»,իսկ երբեմն էլ՝ ճգնաժամ ընտանիքում, համապատասխանաբար, նաեւ նրա կրթական հնարավորություններին:

Ըստ Ի.Ս. Մարկովսկայայի ընտանիքում փոխհարաբերություններն ունեն այնպիսի բնութագրեր, որոնք ընտանիքում կրթությունը դարձնում են կրթության ամենահամարժեք ձեւը կրթության ամենահամարժեք ձևը, այն ձեւը, որը լավագույնս համապատասխանում է անձի զարգացման տվյալ ժամանակահատվածի բնութագրերին:

#### **ա)Միջանձնային հարաբերությունները ընտանիքում**

Ընտանիքում հարաբերությունները միջանձնային հարաբերությունների ձեւ են, որոնք իրականացվում են անմիջական շփման միջոցով: Դա անհատականության ձեւավորման հոգեբանական մեխանիզմներից մեկն է: Դրա կարիքը ունի համընդհանուր բնույթ եւ մարդու սոցիալական բարձրագույն կարիքն է:

Մեծահասակների հետ շփվելու գործընթացում երեխաները ձեռք են բերում խոսքի, մտածողության, գործողության որոշակի հմտություններ, ձեռք են բերում փորձի հիմունքներ կյանքի տարբեր ոլորտներում:

Ըստ Վ.Պորչեսկոյի կան ընտանեկան հարաբերությունների 4 ոճ.

- ավտորիտար ընտանիք,
- համագործակցություն ընտանիքում,
- խնամող ընտանիք,
- անտարբեր ընտանիք:

Աղյուսակ 1-ում ներկայացված են Վ. Պորչեսկոյի կողմից առանձնացված այն

որակները, որոնք ձեւավորվում են տարբեր տեսակի ընտանեկան հարաբերություններ

ունեցող երեխայի մոտ:

Աղյուսակ 1 Տարբեր տեսակի ընտանեկան հարաբերություններ ունեցող երեխայի մոտ ձևավորված որակներ

Ընտանիքում հարաբերությունների տեսակը	Համառոտ նկարագրություն	Ձեւավորվող որակներ
Ավտորիտար ընտանիք	Ընտանիքի որոշ անդամների կողմից մյուսների նախաձեռնության եւ ինքնագնահատականի համակարգված ճնշումը	Երեխայի դիմադրությունը, ով պատասխանում է ճնշումներին և հարկադրանքին կեղծավորությամբ, խաբեությամբ, կոպտության պոթթկումներով, երբեմն էլ բացահայտ ատելությամբ, անկախության, ինքնագնահատականի, նախաձեռնողականության վերացում, հավատ սեփական անձի եւ իր կարողությունների նկատմամբ:
Համագործակցություն ընտանիքում	Ընտանիքում միջանձնային հարաբերությունների միջնորդությունը համատեղ գործունեության ընդհանուր նպատակներով եւ խնդիրներով, դրա	Բոլոր դրական հատկությունները, որոնք միայն կարող են ձեւավորվել՝ հարգանք մեծերի նկատմամբ, սեր, վստահություն, փոխօգնություն և այլն:

	<p>կազմակերպմամբ եւ բարոյական բարձր արժեքներով: Երեխայի էգոիստական անհատականությունը հաղթահարված է. Ընտանիքը ձեռք է բերում առանձնահատուկ որակ, դառնում բարձր մակարդակի զարգացման խումբ՝ թիմ:</p>	
<p>Խնամող ընտանիք</p>	<p>Հարաբերությունների համակարգ, որտեղ ծնողները, իրենց աշխատանքով ապահովելով երեխայի բոլոր կարիքների բավարարումը, պաշտպանում են նրան ցանկացած հոգսերից, ջանքերից և դժվարություններից՝ իրենց վրա վերցնելով դրանք: Անհատականության ակտիվ ձևավորման հարցը</p>	<p>Կրթական ազդեցությունների կենտրոնում մեկ այլ խնդիր է՝ բավարարել երեխայի կարիքները եւ պաշտպանել նրան դժվարություններից, ինչի արդյունքում առաջանում է մեկ այլ խնդիր՝ թիմում լիլելու անկարողություն, պատանեկության տարիքում հաճախակի խնդիրներ, ինքնուրույնության, նախաձեռնողականության</p>

	հետին պլան է մղվում:	բացակայություն:
Անտարբեր ընտանիք	Ընտանիքում միջանձնային հարաբերությունների համակարգը՝ հիմնված երեխաներից մեծահասակների անկախ գոյության հնարավորության եւ նույնիսկ նպատակահարմարության ճանաչման վրա:	Եսասիրություն, այլ հարազատների նկատմամբ ուշադրության իսպառ բացակայություն, անտարբերություն, պատանեկության շրջանում ուշադրության պակասի անկում, վատ ընկերական շրջապատի վատ ազդեցություն:

Միջանձնային հարաբերությունները հոգեբանական հարաբերություններ են, որոնք հիմնված են սուբյեկտների փոխադարձ պատրաստվածության վրա որոշակի տեսակի փոխգործակցության եւ հաղորդակցության համար եւ ուղեկցվում են համակրանքի կամ հակակրանքի զգացումով:

Ծնողների վարքագիծը մեծ ազդեցություն ունի երեխայի վարքի վրա: Եթե ծնողները նրան վանում են, ապա երեխան սկսում է զգալ իրեն ոչ պետքական, նա կարծում է, որ ծնողներն իրեն երկրորդ պլան են մղել: Հաճախ այդ երեխաները փորձում են ուշադրություն գրավել վատ վարքագծով, ինչին ծնողները հավանություն չեն տալիս, բայց դա օգնում է երեխային լինել ուշադրության կենտրոնում: Երեխան իրեն ավելորդ է զգում այն իրավիճակներում, երբ ծնողները չեն ցանկանում շփվել նրա հետ, չեն

խաղում նրա հետ, երբ նա հարցնում է գործնականում չեն նկատում, նրանք անընդհատ զբաղված են սեփական գործերով: Այն երեխաները, որոնց ծնողները չափազանց շատ են խնամում, հիմնականում ցուցադրական դիրք են գրավում: Նրանք միշտ փորձում են ամբողջ ուշադրությունը կենտրոնացնել միայն իրենց վրա: Նման երեխաների կարիքները գերակշռում են ուրիշների կարիքներին: Նման երեխաները առավել հաճախ փոքր երեխաներն են, որքան հիվանդություն ունեցող երեխաներ կամ եթե երեխան ընտանիքի միակ երեխան է:

բ)Ինչ ազդեցություն են ունենում ընտանեկան կոնֆլիկտները երեխայի հոգեբանության և ուսման վրա

Գոյություն ունի «կոնֆլիկտ» հասկացության մի քանի սահմանում: Բ. Մ.

Ռեբուսը կոնֆլիկտը բնութագրում է որպես «մարդկանց գիտակցության մեջ միմյանց հանդեպ հակադարձ ուղղված եւ անհամատեղելի միտումների բախում՝ կապված բացասական սուր հուզական ապրումների հետ»:

Ըստ Ա. Վ. Սերգեյչուկի՝ «կոնֆլիկտը անհատների անհամատեղելի նպատակների, հետաքրքրությունների, դիրքորոշումների, կարծիքների, հայացքների բախում է»:

Ի տարբերություն Ռեբուսի եւ Սերգեյչուկի՝ Ա.Մ.Ստոյարենկոն կոնֆլիկտը բնութագրում է ոչ թե որպես բախում, այլ հակասություն. «Կոնֆլիկտը երկու եւ ավելի մարդկանց (խմբերի) միջեւ սուր եւ դժվար լուծվող հակասություն է, որը բնութագրվում է հակամարտությամբ, հակասող կողմերի կողմից ուժեղ միջոցների փոխադարձ կիրառմամբ՝ հակառակ կողմին հաղթելու նպատակով»:

Ընտանեկան կոնֆլիկտները կապված են որոշակի կարիքներ բավարարելու, բացասական ազդեցություններից խուսափելու, սեփական շահերի համար պայմաններ ստեղծելու ցանկության հետ՝ հաշվի չառնելով զուգընկերոջ կարիքները: Եվ բնականաբար այս ամենը առաջնային ազդեցություն է ունենում երեխաների վրա: Ըստ վիճակագրական տվյալների ընտանեկան կոնֆլիկտների հիմնական պատճառը հաղորդակցման կուլտուրայի, փոխադարձ վստահության, քաղաքավարության,

ուշադրության, բարյացակամության, նրբազգացության բացակայությունն է: Իրականում կոնֆլիկտների պատճառ կարող են հանդիսանալ հոգեբանական անհամատեղելիությունը, սեռական խնդիրները, միմյանց մտադրությունները չհասկանալը, վարքի սխալ մեկնաբանությունները, բարոյականության վերաբերյալ տարբեր մոտեցումները, պարտքի և պատասխանատվության զգացումի բացակայությունը եւ այլն: Հաճախ կոնֆլիկտներ են առաջանում անապահով ընտանիքներում, որտեղ ամուսիններից մեկը կամ երկուսն էլ չարաշահում են ավելոհողը եւ անօրինական նյութերը, այն ընտանիքներում, որտեղ հաճախակի սկանդալներ են լինում, մշտական լարվածություն է տիրում: Ծանր դեպքերում կոնֆլիկտը տեսանելի է նույնիսկ անձանոթ մարդկանց, երբ ամուսիններն այլեւս չեն կարողանում զսպել իրենց զգացմունքները եւ ցանկացած պատճառով գնում են առճակատման: Հաճախ նկատվում է նաեւ բռնության դրսեւորում ամուսնու եւ երեխաների նկատմամբ: Հոգեբանական եւ մանկավարժական գրականության մեջ կարծիք կա, որնախադարձական եւ կրտսեր դպրոցական տարիքը շատ առումներով որոշիչ է երեխայի անհատականության դաստիարակության գործում, քանի որ նրա հիմնական մտավոր հատկությունները ձեւավորվում են հենց այդ տարիքում: Օրինակ, հոգեբաններն ու հոգեթերապեւտները նշում են, որ դյուրագրգիռ եւ անհանգիստ երեխաների ծնողները նույնպես դյուրագրգիռ եւ նյարդային են: Եվ այստեղ խոսքը միայն ժառանգականության մասին չէ, այլ այն էմոցիոնալ մթնոլորտի, որն անընդհատ ձեւավորվում է ընտանիքում եւ հետո ամրագրվում երեխայի հոգեկանում: Երեխայի առջեւ ամուսինների միջեւ ընտանիքում ծագող ցանկացած կոնֆլիկտ նրա համար տրավմատիկ իրավիճակ է, որը կարող է դառնալ գրգռվածության, անհանգստության, վախի, տարբեր նեւրոզների եւ նույնիսկ հոգեկան հիվանդությունների պատճառ:

Որոշել, թե ով է ճիշտ՝ հայրիկը, թե մայրիկը, ընտրել, գնահատել և, առավել ևս,

կողմնորոշվել, իրավիճակն իսկապես դրամատիկ է: Երեխայի փորձառությամբ, կյանքի եւ մարդկանց մասին նրա սահմանափակ գիտելիքներով ընտանեկան

կոնֆլիկտների հետ վարվելը ճնշող հոգեկան բեռ է: Այդ իսկ պատճառով ընտանիքում

ընկերական, հանգիստ հարաբերությունները երեխայի անհատականության  
բնականոն զարգացման նախապայման են:

Ծնողների կողմից անբարյացակամությունը երեխաների մոտ անգիտակցաբար  
փոխադարձ թշնամանք է առաջացնում: Ցավոք սրտի, կյանքում քիչ չեն դեպքերը, երբ  
ծնողները չեն սիրում իրենց երեխաներին, իսկ երեխաները թշնամաբար են  
տրամադրված իրենց ծնողների նկատմամբ: Այսպիսով, ամուսնու եւ կնոջ, ընտանիքի  
այլ անդամների միջեւ կոնֆլիկտային հարաբերությունները, ծնողների դժգոհությունը  
միմյանցից, իհարկե, կազդի երեխայի բնավորության վրա բացասականորեն:  
Ընտանիքում առաջացող կոնֆլիկտների ժամանակ երեխայի վարքագիծը մեծապես  
կախված է նրա տարիքից, խառնվածքից, ինքնագնահատականից, սթրեսային  
դիմադրությունից, ակտիվությունից եւ մարդամոտությունից: Կարծիք կա, որ երեխայի  
վրա բացասաբար են ազդում միայն այն կոնֆլիկտները ընտանիքում, որոնք տեղի են  
ունեցել նրա ներկայությամբ: Բայց հոգեբանները ծնողների ուշադրությունը  
հրավիրում են այն փաստի վրա, որ երեխաները կարողանում են խորապես զգալ  
ծնողների միջեւ նույնիսկ թաքնված կոնֆլիկտները, որոնք չեն հանգեցնում արտաքին  
վեճի կամ միմյանց նկատմամբ մեղադրանքների, այլ երկար ժամանակ օտարություն եւ  
սառնություն են սերմանում հարաբերություններում, ընտանիքում: Պետք է կարողանալ  
կառուցողական երկխոսություն հաստատել, ժամանակին գնալ փոխզիջումների:  
Կարևորը պարտականությունների սահմանազատումն է, համաձայնությունը:

Որոշ երեխաների համար կոնֆլիկտը դառնում է սովորական մի երևույթ:

Հետագայում՝ հասուն տարիքում, նրանք այդ նույն անտարբերությունը դրսևորում են  
շրջապատող մարդկանց, երեւույթների նկատմամբ, դառնում են սառնասիրտ,  
ունենում ապրումակցման ցածր մակարդակ: Այս երեխաների ծնողները, տարված  
լինելով հարաբերություններ պարզելով, չեն նկատում, որ իրենց երեխան ձեռք է բերում  
բնավորության բացասական գծեր, կատարում անընդունելի արարքներ, դրսևորում  
հակասոցիալական վարքագիծ:

Ընտանեկան կոնֆլիկտների ազդեցությունը երեխայի վրա սովորաբար աստիճանաբար նվազում է միայն 2-3 տարվա ընթացքում, սակայն կարող են մնալ նաև անդառնալի հետեւանքներ: Շատ կարելու է ներընտանեկան խնդիրների հաղթահարումը համատեղ ջանքերով: Ընտանեկան հակամարտությունը ծագում է ընտանիքի տարբեր անդամների տեսակետների կամ համոզմունքների բախումից, որի արդյունքում կողմերը գալիս են սխալ եզրակացությունների կամ մեղադրանքների: Երբեմն կոնֆլիկտը կարող է նաև որոշակի դրական ազդեցություն ունենալ, բարձրացնելով, օրինակ, երեխայի իրավագիտակցությունը, արդարամտությունը կամ ընտանեկան կայունության կարելորության մասին գիտակցությունը, եթե այն ընթանում է ոչ բռնի, հանգիստ պայմաններում եւ կողմերը պատրաստակամորեն լսում են միմյանց, հայտնում դիրքորոշումները, որոնք բերում են խնդրի խաղաղ կարգավորման:

Մեծ թվով կոնֆլիկտներ են առաջանում դեռահասության տարիքում, ինչը պայմանավորված է դեռահասաների հոգեբանական, ֆիզիկական եւ սեռական կյանքում տեղի ունեցող փոփոխություններով: Դեռահասությունն ինքնին համարվում է ճգնաժամային տարիք, եւ այս տարիքային փուլում առավել կարելու է ընտանեկան ջերմ հարաբերությունները, փոխադարձ վստահությունը, հարգանքը, փոխըմբռնումը: Այս տարիքային փուլում հաճախ է առաջանում «հայրեր եւ որդիներ» խնդիրը: Մի դեպքում դեռահասն սկսում է համեմատել «իդեալական ծնողի» իր պատկերացումներն իրական ծնողների հետ եւ տեսնում է, որ հսկայական տարբերություն կա «իդեալական» եւ «իրական» ծնողների միջեւ: Մյուս դեպքում դեռահասը, որի մոտ սկսվել է ֆիզիկական բուռն զարգացման եւ սեռական հասունացման գործընթաց, սկսում է իրեն մեծ համարել եւ բոլորից պահանջել, որ իրեն վերաբերվեն ինչպես մեծի: Բոլոր դեռահասները, առանց բացառության, ունեն այդ ձգտումը: Այն ծնողները, ովքեր շարունակում են դեռահասին վերաբերվել փոքր երեխայի նման, ունենում են լուրջ խնդիրներ: Ծայրահեղ դեպքերում ծնող-երեխա



լարված հարաբերությունները հանգեցնում են նյարդայնության, ընկճախտի, բռնության դրսևորումների: Ծնող-երեխա հարաբերություններում կոնֆլիկտներ են առաջանում նաև սխալ դաստիարակության պատճառով: Ծնողը միշտ ձգտում է իր երեխային դարձնել օրինակելի, անթերի՝ կիրառելով խիստ պատժամիջոցներ, կոպիտ վարվելով, քիչ խրախուսելով, երբեմն էլ դաժան վերաբերմունք դրսևորելով: Ոչ տեղին պատիժը, ծնողի կոպտությունը, դաժանությունը երեխայի մեջ հանգեցնում են երկու ծայրահեղ դրսևորումների. առաջին դեպքում երեխան մեծանում է չարացած, ագրեսիվ, երկրորդ դեպքում՝ անվստահ, բարդությամբ լորված:

Ընդհանրացնելով կատարած աշխատանքը՝ մենք եկանք այն եզրակացության,

որ ընտանիքի անառողջ մթնոլորտը, ամուսինների կոնֆլիկտային հարաբերությունները միանշանակ բացասական ազդեցություն են գործում երեխայի վրա: Երեխան, որը մշտապես գտնվում է լարված, սթրեսային վիճակում, ունենում է ծանր բնավորություն, չի կարողանում կապեր հաստատել հասակակիցների եւ մեծահասակների հետ, ունենում է ոչ ադեկվատ, ցածր ինքնագնահատական:

Ցանկացած ընտանիքում վեճերն ու կոնֆլիկտներն անխուսափելի են, ուստի յուրաքանչյուր մեծահասակ ամուսնական զույգ պետք է սթափ գիտակցի, որ պատասխանատվություն է կրում ձեւավորելու եւ դաստիարակելու առողջ երեխա: Այդ պատճառով ընտանիքում պետք է.

- կոնֆլիկտների թիվը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում դրանց արագ լուծում տալ,

- ընտանիքում ստեղծել խաղաղ, հանգիստ մթնոլորտ երեխայի ֆիզիկական եւ հոգեկան զարգացման համար,

- բարիդրացիական հարաբերություններ հաստատել ինչպես երեխայի, այնպես էլ ընտանիքի բոլոր անդամների հետ՝ հիմնված սիրո եւ հարգանքի վրա:

## Եզրակացություն

Այն ամբողջ հոգեբանական խնդիրների համակարգը, որը ի հայտ է գալիս ամուսինների, ծնողների, երեխաների մոտ հնարավոր է լուծել միայն ներընտանեկան հարաբերությունների ձևավորմամբ: Հակամարտությունները կամ վեճերը կազմում են հասարակության մեջ կյանքի անբաժանելի տարր: Լավ կառավարվող հակամարտությունը հաստատվում է որպես զարգացման և առաջընթացի միջոց, ուստի անհրաժեշտ է դրան դիմակայել՝ դրանից դասեր քաղելու համար: Ակնհայտ է, որ ընտանեկան կոնֆլիկտները բնական բան է, քանի որ ընտանիքի միավորի անդամների համակեցության պայմաններում՝ տարբեր տարիքի, մտքի և կյանքը տեսնելու ձևերի հետ, բախումն անխուսափելի է: Այնուամենայնիվ, հիմնարար բանը ոչ թե ամեն գնով բախումներից խուսափելն է, քանի որ դա անհնար է, այլ խուսափել ագրեսիվության սրացումից և այն կարգավորել խելացիորեն և հմտորեն: Այն պահին, երբ ընտանիքում, կամ ընտանիքի տարածքում կոնֆլիկտ է հայտնվում, հայտնվում է նաև անկայունություն, որը կարող է հանգեցնել հիասթափությունների և անհանգստությունների, նույնիսկ չափազանցված: Բացի այդ հին խնդիրները կարող են սկսել կրկին դրսևորել, որոնք չեն լուծվել և որոնք միայն նպաստում են հակամարտության գնդակն ավելի մեծացնելուն: Ընտանեկան ցանկացած ճգնաժամ պահանջում է բոլոր անդամների համագործակցությունը, ինչպես նաև վերափոխում և հարմարեցում նոր իրավիճակի, քանի որ ընտանեկան վեճի ընթացքում ընտանեկան համատեքստում սահմանված Կանոնները դառնում են անորոշ և դրանց վրա անհրաժեշտ է նորից աշխատել: Ընտանեկան կոնֆլիկտների հուզական բաղադրիչի պատճառով շատ դեպքերում մարդիկ 15 հակված են վիճել ցանկացած պահի և ցանկացած վայրում: Այնուամենայնիվ ավելի լավ է հետաձգել քննարկումը, երբ հոգիներն ավելի հանգիստ են, և համատեքստը ուղեկցում և նպաստում է երկխոսությանը:

Որպեսզի ընտանեկան հակամարտությունը դուրս չգա բանականության սահմաններից, ծնողները պետք է մտածեն, որ իրենց տարածայնությունների

պատասխանատվությունը չպետք է տեղափոխեն որեւէ մեկի, այն է՝ երեխայի վրա: Մեր կարծիքով, երբ երեխաների ներկայությամբ կոնֆլիկտային իրավիճակ է ստեղծվում, այն անպայման պետք է դրական ավարտ ունենա, քանի որ երեխան չպետք է ագրեսիա զգա ծնողների միջև: Եթե վեճը չհաջողվեց լուծել խաղաղ ճանապարհով, պետք է հնարավորինս պաշտպանել երեխային կոնֆլիկտից: Պետք է հասկանալ, որ սիրելիի հետ հարաբերություններն ավելի կարեւոր են, քան սեփական սկզբունքները: Կյանքում յուրաքանչյուր երեխա կարիք ունի ծնողների աջակցության եւ պաշտպանության:

Կոնֆլիկտային իրավիճակը երեխայի համար ոչ մի դրական բան չի բերում, եւ այս իրավիճակի պատճառով ավելի շատ պետք է մտածել ապագա հնարավոր խնդիրների մասին, քան սեփական ամբիցիաների մասին:

## Օգտագործված գրականության ցանկ

1. Սեդրակ Սեդրակյան << Ընտանիքի հոգեբանություն > > Երևան 2010թ
2. Ա.Ա.Նալչաջյան<<Սոցիալական հոգեբանություն>>. Երևան 2004
3. Հ.Հ. Սահմանադրություն
4. Порческо В. Психологический конфликт и особенности индивидуального развития личности ребенка. – М.: Педагогика, 2013
5. Марковская И.М. Тренинг взаимодействия родителей с детьми. – СПб., 2013
6. Обухова Л.Ф. Детская психология: теории, факты, проблемы. – М., 2015